Ջեռուցման համակարգի աշխատանքային գծագրերի հիմնական լրակազմի ամփոփագիր

Թերթ	Անվանում	Ծանոթագր.
1	Ընդհանուր տվյալներ	Ջ-1
2	Առաջին հարկի հատակագիծ ջեռուցման համակարգի անցկացումով Մ 1:100	Ջ-2
3	Երկրորդ հարկի հատակագիծ ջեռուցման համակարգի անցկացումով Մ 1:100	Ջ-3
4	Երրորդ հարկի հատակագիծ ջեռուցման համակարգի անցկացումով Մ 1:100	Ջ-4
5	Առաջին հարկի ջեռուցման համակարգի սխեմա	Ջ-5
6	Երկրորդ հարկի ջեռուցման համակարգի սխեմա	Ջ-6
7	Երրորդ հարկի ջեռուցման համակարգի սխեմա	Ջ-7
8	Ջեռուցման համակարգի մասնագիր	Ջ-8

Պայմանական նշաններ

Ջեռուցման մատակարարող խողովակագիծ

Ջեռուցման հետադարձ խողովակագիծ

Փական

Դատարկման փական

d=20x2.8 Խողովակի տրամագիծ

Ջեռուցման տուրբո կաթսա

50×80 Ջեռուցման պողպատե պանելային մարտկոց 50սմ×80սմ չափերով (հատակագծում)

50×80 Ջեռուցման պողպատե պանելային մարտկոց կարգավորիչ փականով և օդահան կափույրով 50սմ ×80սմ չափերով (սխեմայում)

Կ.1 Ջեռուցման կանգնակ № 1

Անցում հատակի նախաշերտի միջով

Ընդհանուր ցուցումներ

Թալինի թիվ 3 մանկապարտեզի ջեռուցման համակարգի նախագիծն իրականացված է ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, նախագծման նորմերին և կանոններին (ՀՀՇՆ IV-12.02.01-04), ինչպես նաև նախագծային առաջադրանքին համապատասխան:

Նախագիծն իրականացված է ըստ արտաքին օդի հաշվարկային ջերմաստիճանի տարվա ցուրտ շրջանի համար tհ = - 18°C:

Ջեռուցում

1. Մանկապարտեզի համար նախագծվում է փակուղային ջեռուցման համակարգ: Մայրուղային խողովակագծերն անց են կացվում առաջին, երկրորդ և երրորդ հարկերի հատակների վրայով:
2. Ջեռուցման ընդհանուր ծախսը կազմում է 90.0կՎտ (77400կկալ/ժամ):
3. Նախագծով նախատեսվում է ջերմային հանգույցում տեղադրել ապամոնտաժված երկու տուրբո կաթսա՝ յուրաքանչյուրը 28կՎտ հզորությամբ և մեկ նոր տեղադրվող տուրբո կաթսա՝ 40կՎտ հզորությամբ:
4. Որպես ջերմատար ծառայում է 80-60°C ջերմաստիճանով տաք ջուրը:
5. Որպես ջեռուցման սարքեր ընդունված են պողպատե պանելային մարտկոցներ, որոնց համապատասխան կախիչները, պտուտակամեխերը, փակիչը և օդահան կափույրը ներառված են յուրաքանչյուր կոմպլեկտում: Տեղադրվում են նաև ապամոնտաժված ջեռուցման ալյումինե h=500մմ բարձրությամբ մարտկոցները:
6. Ջեռուցման համակարգում բոլոր խողովակները նախատեսվում են պոլիպրոպիլենային:
7. Համակարգից օդի հեռացումն իրականացվում է ջեռուցման մարտկոցների վրա տեղադրված օդահան կափույրների միջոցով:
8. Որպես ելակետային ջուր օգտագործվում է խմելու ջուրը շենքի ներքին ջրամատակարարման ցանցից
9. Ջրի հեռացումը համակարգից իրականացվում է դատարկման փականների միջոցով դեպի հոսակ:
10. Մայրուղային խողովակագծերը սյուների մոտ անց են կացվում ե/բ սյուները շրջանցելով:
11. Հատակի նախաշերտի միջով անցնող խողովակները ջերմամեկուսացվում են ռետինե ջերմամեկուսիչ խողովակներով:
12. Մայրուղային խողովակագծերը ծածկվում են փայտատաշեղային լամինացված սալերով:
13. Շահագործումից առաջ ջեռուցման համակարգը ենթարկվում է հիդրավլիկ փորձարկման:
14. Թողարկումից հետո կատարվում է ջեռուցման համակարգի կարգաբերում:

Ծրագրի առաջադրանք՝ TAN-07				Թալինի թիվ 3 մանկապարտեզի վերակառուցում		
				Ջեռուցում	ՓՈՒԼ	ԹԵՐԹ	ԹԵՐԹԵՐ
					ԱՆ	Ջ-1	8
				Ընդհանուր տվյալներ	INTER energia	ՀՆՏԵՐ էներգիա ՍՊԸ
Նախագծ.	Ա. Թորոսյան					
Պաշտոն	Ազգանուն	Ստորագր.				